

Չենք հանդիպած Թիւսիւղեանի խոստացած գրութեան:

Ընկերութիւնս 1861ին Ընթերցարան մ'ունէր²⁶: Իսկ Ծիածան 1866 Դեկտ.ին սա ծանուցումը կը հրատարակէ. «Սասազիւղի վարդապետը գրասարանը ամէն կահերովը պատրաստ վարձու է: Յիսուն ընթերցատեղանմանց ընկերութեամբ քանգարան մ'ալ հաստատուած է: Վարձել ուզողը Թիւսիւղեան Համբարձում Աղայի թող դիմէ²⁷»:

Ատկէ վերջ ա'լ յիշատակութիւն չ'ըլլար Ընկերութեանս մասին:

6. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1859)

Կազմուած է 1859ի սկիզբը: Մասիսի մէջ կը յիշուի արդէն 1859 Մարտ 5ին, ուր Տ. Նուսուֆեան կը գրէ. «Սասազիւղի մէջ հաստատուած Թատերական Ընկերութիւնը արդէն մէկ քանի նկարագրութիւն ալ ձեւացուցած է ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականաց: Մենք թէպէտ եւ այն խաղարկութեանց ներկայ գտնուելու բարեբաղդութիւնը դեռ չեմք ունեցած, բայց կը համարձակիմք յօտար սրտիւ մասնակից ըլլալ իրենց գովելի ձեռնարկութիւնը քաջալերող ազնիւ հանդիսականաց խրախուսիչ ծափահարութեանց²⁸»:

1898ին «Բանասէր» կը գրէ. «(1859) Սասազիւղիք Օրթագիւղցիներէ քաջալերուած, կը կազմեն Թատերական Ընկերութիւն մը եւ խումբ եւ ազգային վարժարանին մէջ կու տան կանոնաւոր ներկայացումներ: Բաւական յաջողութիւն կը գտնեն եւ քանի մը ամիսներ ետքը (1860 Փետր. 26) Բերայի Նաւաթի խաղական թատրոնին մէջ կու տան չքեղ ներկայացում մը, առաջնորդութեամբ Գ. Էքզեանի. խաղն էր Մոնթի խաղացի բանաստեղծին Արիստոտէմ ողբերգութիւնը հայերէն թարգմանուած²⁹»:

²⁶ Արեւիկէ, 1898, Թ. 3791:

7. ԳԹՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861)

Հաստատուած է 1861 Փետր.ին: Հիմնադիրներն են Սասազիւղի Հայ Տիկիները՝ խորհուրդով քաղին քարոզիչ Ներսէս Վրդ. Վարժապետեանի (յետոյ Պատրիարք)³⁰:

²⁶ Մասիս, 1861, Թ. 498:

²⁷ Ծիածան, անդ, Թ. 14:

²⁸ Մասիս, 1859, Թ. 371:

³⁰ Մասիս, 1862, Թ. 527:

Ընկերութեանս նպատակն էր Սասազիւղի Ներսիսեան աղջկանց վարժարանի նիւթական մատակարարութիւնը ստանձնել եւ արդէն 1861 Փետրուարին Ընկերութեան կ'անդամակցին 70 տիկիներ եւ օրիորդներ³¹: Իսկ 1863ին 100 անդամուհի ունի:

Ընկերութիւնը տարին մէկ անգամ Ընդ. Ժողով կը գումարէ. իր Տնօրէն Ժողովը կ'ընտրէ գաղտնի քուէարկութեամբ. 1861—1863 Ընկերութեան Մուտքը կ'ըլլայ 50,982 ղրշ., իսկ Ելքը՝ 50,956 ղրշ.³²:

Սխալ է, հետեւաբար, գրել թէ Ընկերութիւնս «Սասազիւղի Տիկիանց նախաձեռնութեամբ» եւ «քաղին աղքատներուն հոգաձուրեան համար» կազմուած է³³:

8. ՆԵՐՍԻՍԵԱՆ ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1863)

Սասազիւղի Ներսիսեան վարժարանը երկու «Սանուց»ներ ունեցած է. մին վարժարանի մէջ եղող սաներէ կամ աշակերտներէ կազմուած՝ 1863ին եւ երկրորդը շրջանաւարտ նախկին սաներէ՝ 1870ին:

Այս Ընկերութիւնը կազմած են Ներսիսեանի ներքին աշակերտները 1863ին եւ կը կոչուի «Ներսիսեան Սանուց Ընկերութիւն», որ ունեցած է իր Կանոնագիրը, կախուած վարժարանի մէջ, բայց չէ հրատարակուած: Իր նպատակն էր. «Ըստ իւր կարեաց ուսման յառաջադիմութեան որեւէ կերպիւ նպաստել»: Կը հաստատէ Թանգարան մը՝ աշակերտներու ընթերցման եւ զարգացման համար: Ընկերութիւնը վեց ամիսը անգամ մը կը ներկայացնէ իր հաշիւները: Պաշտպան-Սանակալ կ'ունենայ վարժարանի տնօրէն՝ Կարապետ Զուլխանեան³⁴:

Պուրոյ Մեղուին մէջ անստորագիր մը զարմանք կը յայտնէ որ զպրոցական տղաք ալ սկսած են Ընկերութիւն կազմել եւ կը յիշէ Ընկերութեան հիմնադիր — անդամներէն Յ. Գալբազեան, Կ. Բարազամեան, Թ. Յարութիւնեան³⁵:

Այս «Սանուց»ը անձանօթ մնացած է, ըլլալով կարճատեւ:

9. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1867)

Պուրոյ Փնջիկ կը գրէ 1867 Նոյ. 4ին. «Սասազիւղի երիտասարդներէն ումանք Ընկեր-

³¹ Մեղու, 1861, Թ. 126:

³² Անդ, 1863, Թ. 198:

³³ Գաղ. Տարեգ., Բ., էջ 83:

³⁴ Ժամանակ, 1863, էջ 208:

³⁵ Մեղու, 1863, էջ 321:

ութիւն մը կազմեր են, քաղցիներէն շաբաթական 20 փարպ ժողովուր եւ ամէն երկու ամիսն անգամ մը Հիւանդանոցի վերատեսչութեան յանձնելու գովելի նպատակաւ³⁶: Ս. Փրկչի Աղգ. Հիւանդանոցը 1867ին տազնապալի վիճակ մ'ունէր: Բիւզանդ Քէչեան կը գրէ որ նոյն իսկ զիշեր մ'եղաւ որ «բոլոր պատապարեալք անօթի մնացած էին» դրամի պակասէն³⁷: Ահա այդպիսի տազնապալի պահու մըն է որ Սասազիւղի երիտասարդութիւնը ազնիւ շարժուած էր կ'ընէ փոքրիկ օգնութիւն մը հասցնելու համար ազգին թշուառներուն:

Մեղք որ անձանօթ կը մնայ Ընկերութեանս անունը, ինչպէս անձանօթ մնացած է Ընկերութիւնս իսկ Հիւանդանոցի Պատմութեան հեղինակին: Բնականաբար անձանօթ է նաեւ Ալլոյոյ ճանաչի, Թորոյ տեանի եւ Վարժապետեանի:

10. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868)

Հաւանօրէն կազմուած է 1868ի սկիզբները: Կը յիշուի 1868 Սեպտ.ին: Հիմնադիրն է Ամբրոսիոս Վարդապետ, իսկ նպատակը՝ «պանդուխտ եղբարց օրի կարգալ գրել սովորեցնելի³⁸»:

Անձանօթ է Ալլոյոյ ճանաչի:

11. ԵՆԱՐԿԱՆԱՆՆԻ ՏԻԿՆԱՆՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

Ժամանակակից թերթ մը հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «Սասազիւղի Ներսիսեան օրիորդաց վարժարանին համար Սնամակալութիւն մը կազմուած է՝ որոյ անդամներն են.

- Տիկին Մանան Նիզամեան
- Նազըլ Ճարակեան
- Նարեկի Քալուքեան
- Օրդ. Սրբուհի Մինասեան
- Երանուհի Մինասեան
- Նոյեմի Տ. Գէորգեան
- Ազնիւ Զարֆեան

Կը շնորհաւորենք սոյն ազնուուհի Տիկինանց եւ Օրիորդաց այս փափուկ եւ նուիրական պաշտօնը, զոր ազգասիրաբար յանձնառնելու բարեհաճած են... որպէս զի ապա-

³⁶ Փնջիկ, 1867, Թ. 51:

³⁷ Բիւզանդ Քէչեան, Պատմութիւն Ս. Փրկչի Հիւանդանոցի Հայոց, Կ. Պ. 1888, էջ 183:

³⁸ Մասիս Փնթր, 1868, Թ. 237:

յային մէջ Աղգը կարենայ ունենալ լուսաւորեալ մայրեր եւ կրթեալ ամուսիններ, որոնք դժբախտաբար շատ հազուադէպ են մեր Ազգին մէջ, եւ որոնց պակասութիւնն է գլխաւոր պատճառ Հայուն սովորութեանն ու բըռնատրտեանը³⁹:

1869ին կազմուած Ընկերութիւնս ծանօթ է «Սիւնակ Բանասէր»ին⁴⁰:

12. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՆԱՐԿԱՆԱՆՅ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԵՐԿՍԵՆՎԱՐՅԱՆՅ (1870)

Հիմնուած է 1870 Յունուար 1ին՝ իր նպատակն ըլլալով Ներսիսեան վարժարանի նիւթական հոգը բառնալ իր ուսերուն: 1872ի սկիզբը հրատարակուած Ընկերութեան հաշուեցուցակէն կը տեսնենք թէ երկու տարուան մէջ Մուտքն եղած է 2784 ղրշ., իսկ Ելքը՝ 2390 ղրշ.: Տնօրէն Ժողովի Ատենապետն էր Յովակիմ Մերկերեան, Գանձապետը՝ Համբարձում Մանուկեան⁴¹:

13. Ս. Ն. ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Արդէն 1866ին Ներսէս եպ. Վարժապետեան փափազ յայտնած ու թելադրած էր որ Ներսիսեան Սանթրը Ընկերութիւն մը կազմեն՝ յօգուտ իրենց վարժարանին⁴²: Այդ փափազը կ'իրականանայ 1870ին:

Ներսիսեան վարժարանի նախկին աշակերտները 1870 Սեպտ. 11ին մասնաւոր Յայտարարութիւն մը հրատարակելով՝ կ'իմացնեն թէ «Նախնի Սանթր տեսնելով մեզ զարգացող վարժարանաց առժամանակեայ նստակցեալ վիճակը, շարժեալ յերախտագիտութեան եւ կարեկցութեամբ գործելու մեզ յաջողող աշակերտաց վրայ, սոյն յայտարարութեամբ դիմեմք առ մեր նախնի աշակերտակիցս, նոյնպէս առ ամենայն բարեբարս ազգային դաստիարակութեան, հրատարակելով որ յօգնութիւնն իստակալի Ս. Ներսիսեան երկսեռ վարժարանաց Ընկերութիւն մի կազմեալ է յանուն Ս. Ներսիսեան Սանուց: Ա. Սոյն Ընկերութիւնս կազմեալ է ընդ նախագահութեամբ Ս. Ներսէս եպիսկոպոսի եւ վարժարանաց հոգաբարձուաց տնօրէնութեամբ: Բ. Ընկերութիւնս բաժանորդական է եւ ամէն բաժանորդութեան

³⁹ Ժամանակ, 1869, էջ 143:

⁴⁰ Արեւիկէ, 1898, Թ. 3854:

⁴¹ Մասիս, 1872, Թ. 1205: — Մանգ. էֆֆեար, 1872, Թ. 1856: — Օրագիր, 1872, Թ. 681:

⁴² Տէ'ս Մասիս, 1866, Թ. 756:

19. ԲԱԺԱՆՈՐԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873)

1873ի սկիզբները հիմնուած շահակցական Ընկերութեան հիմնադիրներն ու վարչութիւնը կը կազմէին հետեւեալ անձերը.

Սարգիս Արքայազան	Նախագահ
Յարութիւն Կիւմիւլեան	Գանձապահ
Պետրոս Յ. Բարազեան	
Պողոս Ոսկերիչեան	Համարակալ
Նիկողոս Մ. Թիւլպէնտեան	

Ընկերութեան տեւողութիւնը 5 տարի էր, իսկ իր նպատակը՝ ահաւասիկ. «Բաժանորդագրութեամբ գոյացած գումարովը սուկոս կամ շահ ունեցող ապահով եւ փոխարինելի Արժէթուղի եւ Պարտատուներ գնել, փրճականութեամբ ատոնց արտաքոյ կարգի շահուն եւ կամ գլխավճարին հաւանականութեանն սպասելով մինչեւ 5 տարի... արժէթովոց սովորներուն 2% իսպաղի Ս. Ներսիսեան վարժարանին նպաստ յատկացուելով, մնացած 75% ալ վարչ. ժողովոյ ձեռքը յանձնաձեւելիք Ընկերութեանս գործառնութեանը վերաբերեալ ծախքերն ու պիտոյքը հոգալու պիտի ծառայէ»⁵⁸:

Ընկերութեանս կանոնագրութիւնը 30 Յօդուածէ բաղկացած՝ հրատարակուած է Օրագրի մէջ⁵⁹:

20. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

«Սկանակ Բանասէր» կը յիշէ Ընկերութիւն մը, անանուն, որուն նպատակն էր «Լեզուագիտական ուսմանց պարապիլ»⁶⁰: Ուրիշ կողմէ անձանօթ է:

21. ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1877)

Հիմնուած է 1877 Յունուար 1ին: Իր սկզբնական նպատակն եղած է. «Հայաստանի դպրոցաց ճիւղաբար դասագրքեր հայթայթել»⁶¹:

1878ին կը բանայ նաեւ Կիրակնօրեայ դասընթացք մը բնիկ եւ պանդուխտ Հայերու համար: Գասերը տեղի կ'ունենան Ներսիսեան վարժարանը՝ երկու կարգի բաժնուած. Ա. Ընթերցանութիւն, գիր, թուանշան ճանչնալ ու գրել եւ թուարանութեան չորս գործողութիւնները, Ազգ. եւ Սրբազ.

⁵⁸ Օրագիր, 1873, թ. 1018:
⁵⁹ Անդ, թ. 1024:
⁶⁰ Արեւիլ, 1898, թ. 3853:
⁶¹ Մասիս, 1878, թ. 2177:

Պատմութիւն՝ բերանացի. Բ. Հայերէն, Ազգ. եւ Սրբ. Պատմութիւն գրաւոր կերպով, թուարանութիւն, սկզբունք տոմարակալութեան, ընդհ. աշխարհագրութիւն, տաճկերէն, զաղղիերէն, զեղազրութիւն, կրօնական եւ ազգ. երգեր, ձայնագրութիւն»⁶²:

Ընկերութիւնը ձրի կը մատակարարէ վաճի մէջ բացուած վարժապետանոցի բոլոր դասագրքերը⁶³: Դասագրքեր եւ աշխարհացոյց քարտէսներ կը նուիրէ Կիլիկիոյ մէջ բացուած վարժարաններուն⁶⁴: «Կիլիկեան Ընկերութիւնը» հրատարակով շնորհակալութիւն կը յայտնէ «Ասիական Ընկերութեան» որ 100 Փր. արժէքով գիրք նուիրած է Ձէյթունի վարժարանին ու կ'աւելցնէ. «Կիլիկեան Ընկերութիւնը ինքզինք խիստ բարեբաղդ կը համարի իւր բարձր նպատակին գործադրութեան մէջ Ասիականին նման ազնիւ Ընկերութիւն մը իրեն օգնական եւ ձեռնուու ունենալուն»⁶⁵:

Ընկերութեան Ընդհ. ժողովի Դիւանը կազմած են առաջին տարիներուն.

Ռէթէոս Պէրպէրեան	Ա. Ատենապետ
Պարտասար Պապայեան	Բ. Ատենապետ
Լեւոն Աղաթօն	Ա. Ատենադպիր
Գասնիկ Հայկեան	Բ. Ատենադպիր

Իսկ Տնօրէն ժողովը՝

Գրիգոր Զոհրապեան	Ատենապետ
Պողոս Քէրէստէճեան	Ատենադպիր
Միհրան Տէօքմէճեան	Գանձապետ
Միքայէլ Մուշեղեան	Համարակալ
Աղեքսանդր Փանոսեան	Գրեանց Տնօրէն
Գրիգոր Սեղրոսեան	Հասութից Տնօրէն

Միհրան Թիւլպէնտեան Ծախուց Տնօրէն⁶⁶

Ընկերութիւնը 1881ին «Կ'ընդլայնէ իր գործոց շրջանակը փոքր ինչ եւ այսուհետեւ պիտի հրատարակէ ազգային կրթութեան կարեւոր սեպուած դասագրքեր, յորոց ճիւղայէս պիտի տայ Միացեալ ինչպէս եւ մեր ուրիշ Ընկերութեանց Հայաստանի դպրոցաց: Ասիական Ընկերութիւնը կը փափաքի իւր համեստ շրջանակին մէջ մասնակցիլ ազգ.

⁶² Անդ:
⁶³ Հայրենիք, 1878, թ. 472:
⁶⁴ Մասիս, 1879, թ. 2491:
⁶⁵ Հայրենիք, 1879, թ. 528:
⁶⁶ Յակոբ Վարժապետեան, Յիշատակարան Հարստեան Յորեկանի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ, Կ. Պ. 1931, էջ 95—96:

զարգացման գործոյն»⁶⁷: Այդ տարին Ընկերութեան Ընդհ. ժողովի Ատենապետն էր Արփիար Արփիարեան, Ատենադպիրը՝ Միքայէլ Քէօրիւքեան, իսկ վարչ. Մարմինը կը կազմէին.

Պողոս Գ. Քէրէստէճեան	Ատենապետ
Գրիգոր Զոհրապեան	Ատենադպիր
Աւետիս Սուրէնեան	Գրեանց Տնօրէն
Միհրան Մ. Տէօքմէճեան	Գանձապետ
Միքայէլ Մուշեղեան	Համարակալ
Տիգրան Փափազեան	Հասութից Տնօրէն

Յակոբ Գոչումեան Ծախուց Տնօրէն⁶⁸

Ընկերութիւնը 1882ին կ'որոշէ յատուկ Գրական-Գիտական ամսաքերք մը հրատարակել: Կը կազմէ հրատարակչականի կանոնագիր մը, որ կ'ունենայ 18 Յօդուած: Հրատարակելիք ամսաթերթին անունը կ'ըլլայ Երկրագունտ, որուն առաջին թիւը լոյս կը տեսնէ 1882 Յուլ. 1ին՝ 500 օրինակ: Ամսաթերթին տարեկան բաժանորդագրինը 2 արծաթ մէճիւտ էր եւ պարտաւորէ՝ ամէն անգամ⁶⁹: Սմբադիր եղած են Յակոբ Պարոնեան եւ Եղիա Տէմիրճիպաշեան:

1888ին Երկրագունտը կը դադրի. Ընկերութիւնը անոր տեղ Դար հանդէսը կը սկսի Հրատարակել, որմէ սակայն մէկ թիւ միայն լոյս կը տեսնէ⁷⁰:

Ընկերութիւնը կանգուն մնացած է մինչեւ 1900:

22. ԱՂԱՍՏԱՆԻԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1877)

Սասադուլի մէջ արդէն 1836էն գտնուած է Տնանկ տղապատ տնտրակ մը, ուր կը տեսնուին դանազան աղբատնէրու բաժնուած ողորմութիւններ⁷¹: 1840էն ալ գտնուած է «Խապիւղի տնանկ տղապատ տէֆթեր» մը, որուն մէջ արձանագրուած են չբաւորներու բաշխուած դրամներ⁷²: 1843ին «Նորոգ տէֆթէր» կը շինուի «Տնանկ աղբատայ» հաս-

⁶⁷ Մասիս, 1881, թ. 2949:
⁶⁸ Անդ:
⁶⁹ Տեղեկագիր եւ Կանոնադիր Ասիական Ընկերութեան կողմէ հրատարակելիք գիտական եւ գրական հանդիսին, Կ. Պ. 1882:
⁷⁰ Համա. Մաղիլ, 1887, էջ 368:
⁷¹ Արիստակէս Ա. ֆհնյ. Հիւարեան, Յիշատակարան Յիւստանայ Յորեկանի Աղբատայնամ Մարմնոյ Սասադուլի, Կ. Պ. 1929, էջ 35:
⁷² Անդ, էջ 36:

մար⁷³: 1873էն սկսած կան ուրիշ արձանագրութեան տնտրակներ⁷⁴:

Բուն կազմակերպեալ Աղբատայնամ Ընկերութեան մը ծագումը Սասադուլի մէջ եղած է 1877ին, կոչուելով նախ Աղբատայնամ Ընկերութիւն, ինչպէս կը գրէ Աղբատայնամ Ընկերութիւն, ինչպէս կը գրէ Հայ թերթ մը 1879 Ապրիլ 5 թուականով. «Գոհութեամբ կ'իմանամք թէ Սասադուլի Աղբատայնամ Ընկերութիւնը, որոյ հաստատութիւնը հազիւ 2 տարի կը հասնի եւ որոյ նպատակն էր քաղիկի հիւանդ եւ անօգնական աղբատայն անհրաժեշտ պիտոյքը հոգալ ու խնամել... այս տարի Չատակահան սօճի առ-

թիւ... թաղին ամեն կարգի աղբատնէրէն 60ի չափ անձանց ըստ կարեաց ողորմութիւն բաշխելու չափ հանգանակութիւն մ'ընելու յաջողելէն զատ, նաեւ իր մնացած դրամապարտիսն ալ ներկայ դրամական տագնապին երեսէն անջնաս պահելու իմաստութիւնն ու գործունէութիւնն ալ ունեցեր է...: Սասադուլի Աղբատայնամ Ընկերութիւնն իր այս գիւղի Աղբատայնամ Ընկերութեան եւ արժանացած գոաստիճան յաջողութեան եւ արժանացած գոպութեան մէկ մասն ալ ստուգիլ տօքթօր Արծրունի ֆարսաք եւ անձնուէր բժիշկին կը պարտի, որն որ աղբատայնամ Ընկերութեան ներու համար Աղբատայնամ Ընկերութեան կողմանէ ո'ր ատեն եւ ո'ր ժամուն որ զեկուկողմանէ ո'ր ատեն եւ ո'ր ժամուն որ զեկուկողմանէ մ'ընդունի, անմիջապէս կը փութայ իր ցում մ'ընդունի, անմիջապէս կը փութայ իր ցում մ'ընդունի, անմիջապէս կը փութայ իր ցում մ'ընդունի...: Փափաքելի էր որ մայլեալ հիւանդին...: Փափաքելի էր որ մայլեալ աննեղի իրենք ալ իրենց համար մէկ մէկ Աղբատայնամ Ընկերութիւններ հաստատէին»⁷⁵:

1879 Ապրիլ 5էն հազիւ երկու տարի առաջը կ'ըլլայ 1877ի ամառ-աշնան շրջանը: Հետեւաբար սխալ է Ընկերութեանս 50ամեայ Յորեկանին առթիւ գրուած գրքին մէջ ընդունուածը թէ Ընկերութեանս հիմնումը եղած է 1878ին⁷⁶:

1882ին Ընկերութիւնն կը յորջորջուի Հայ թերթէ մը՝ «Աղբատայնամ Ընկերութիւն»⁷⁷:

1878ին Ընկերութեանս վարչ. Մարմինը կազմած են, կ'ըսուի.

⁷³ Անդ:
⁷⁴ Անդ, էջ 44:
⁷⁵ Մանգ. էֆֆիար, 1884, թ. 5307: — Թորգոմեան, անդ, Բ., էջ 451:
⁷⁶ Լրագիր, 1879, թ. 938:
⁷⁷ Հիւարեան, անդ, էջ 43, 86 եւ այլն:
⁷⁸ Թերթ. էֆֆիար, 1882, թ. 1457:

Սարգիս Աբրահամեան Ատենապետ
Ռուբեն Պուլիուբեան Ատենադպիր
Եղիա Շահապետեան Գանձապետ
Առաքել Ա. Տիւրբի
Նիկողոս Թիւրպէնյան 79

1882ի Ընդհ. Ժողովը կ'ընտրէ հետեւեալ Տնօրէն Ժողովը.

Սերովոյ Բեասեան
Իլիաս Տիւնեան
Գրիգոր Թընկերեան
Յարութիւն Իգմիրեան
Պաղուիկ Պապեան
Յովհաննէս Երկանեան
Լէօն Էնֆիլէճեան 80

1883ին Խնամակալութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ բազմաթիւ նուիրատուութեանց համար 81: 1884ին ալ Ընկերութիւնը բաժնած է ազգայնական հաց, միս, բրինձ, զրամ, եւ այլն:

Ազգատանամը կանոնաւոր վարչ. Մարմին ունեցած է 1883—1914, ինչպէս կը տեսնուի իր 50ամեակին սօթիւ հրատարակած զրբէն 82:

Ընկերութիւնն վերջին անգամ վերակազմուած է 1927ին 83 տեւելով մինչեւ օրս:

23. ԿԻԼԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Ինչպէս վերը տկնարկեցինք՝ Խնամակալութեան համար էր 1879ին: Չայն կազմող Առաքել-Նուպար-Շահապետեան վարժարանի նախներով որ Արարատեան եւ Դպրոցատէր-Արեւելեան Ընկերութիւնները իրենց ասպարէզը ընտրելով Վասպուրական ու Տարսուզ գործի լծուած են լոյս սփռելու յետին գիւղին մէջ անգամ՝ ետանդ ու ոգեւորութիւն կը ծնի իրենց մէջ ասպարէզ նետուելու եւ իրենց երիտասարդական աւելնով գործելու ազգին լուսաւորութեան համար: Ասոնք իրենց գործի ասպարէզ կ'ընտրեն Հայկական ուրիշ շրջան մը — Կիլիկիա — ուր 100,000 հաշուող Հայութիւն մը կար եւ Ռուսիանց շրջանէն պանծալի յիշատակներ գեո վառ կը մնային:

Սորհուրդի համար կը գիմեն օրուան Ս. Պատրիարքին եւ իրենց նախկին պաշտ-

79 Հիւարեան, անդ, էջ 43:
80 Թէրթ. Էֆէնար, 1882, թ. 1457:
81 Մանգ. Էֆէնար, 1883, թ. 5164:
82 Տէ'ս Հիւարեան, անդ, էջ 44—50:
83 Անդ, էջ 52:

պան Ներսէս Արք. Վարժապետեանի, որ խորհուրդ կու տայ հաւաքել նախ Շահապետեանի բոլոր նախկին աշակերտները եւ կազմել նախկին միութիւնը: Ս. Պատրիարքը հրաւերի նամակ մը կը գրէ, որ կը սպուր 100 օրինակ եւ կը զրկուի Շահապետեան նախկին աշակերտներու: 1879 Փետր. 18ին կը հաւաքուին 40 նախկիններ Ժողովի, ուր Վարժապետեան իրեն տեղ փոխանորդ զրկած էր Գարեգին Վրդ. Սրուանձտեանց, որ կը նախագահէ Ժողովին: Ժողովը մէջ մանրամասն զեկոյց կը արուի «Վարդանեան» Ընկերութեան մասին, որմէ վերջ միաձայնութեամբ նախկին Վարդանեան Ընկերութեան տեղ կը հիմնուի «Կիլիկիան» Ընկերութիւնը յատուկ Կանոնադրութեամբ եւ ընդարձակուած ծրագրով: Գաղանի քուէով կ'ընտրուի նոր Ընկերութեան Գործադիր Ժողովը: Սրուանձտեանց կը խրախուսէ Ժողովականները՝ «Միութիւն, Յարատեւութիւն եւ Խոնքեւութիւն» յանձնարարելով: Միմաս Չերագ, Ընդհ. Ժողովի կողմէ շնորհակալութիւն կը յայտնէ Սրուանձտեանց վ.ին՝ խնդրելով որ իրենց երախտիքը հաղորդէ Ս. Պատրիարքին, որ այնքան սիրով առաջնորդ եւ զօրավիգ կանգնած էր իրենց աղուսմին 84:

Ընդհ. Ժողովի Գիւնը կը կազմուի հետեւեալներէ.

Մինաս Չերագ Ատենապետ
Կարապետ Կարեկեան Ատենադպիր
Հրանտ Ասատուր Դեր-Ատենապետ
Յակոբ Հազարեան Դեր-Ատենադպիր

Գործ. Ժողովի անդամներն էին.

Յովհաննէս Արշակունի	Ատենապետ
Տիգրան Առաքելեան	Ատենադպիր
Եղուարդ Իւթիճեան	Դեր-Ատենապետ
Սաչատուր Մարտաեան	Գլխի
Յովհաննէս Արծրունի	Գանձապետ
Կարապետ Լաթիֆեան	Համարակալ
Յակոբ Թաշճեան	
Միսաք Թաշճեան	Կնքապահ 85

Ընկերութիւնը 1879ին կը հրատարակէ իր «Հիմնական Կանոնագիր»ը, որ կը բաղկանայ 28 Յօդուածէ, ուսկից կը տեսնենք թէ «Կիլիկեան Ընկերութեան» նպատակն է «Ազգային դաստիարակութիւնն ընդհանրացնել Կիլիկիոյ մէջ». Ընկերութեան կրնայ ան-

84 Մասիս, 1879, թ. 2264:
85 Մասիս, 1879, թ. 2351:

յամակցել ամէն հայ, եթէ մէկ ընկերի կողմէ առաջարկուի եւ Գործ. Ժողովէն ընդունուի (Յօդ. 1). ամսական անդամութեան է 1 արծաթ դուրուշ (Յօդ. 3). պատուոյ անդամները պարտաւոր են տարին 3 ոսկի վճարել (Յօդ. 4). նոյն անձը թէ՛ համարատու եւ թէ՛ համարատու չի կրնար ըլլալ (Յօդ. 11). Իւր պարտքը անթերի չկատարող Ժողով կամ Ժողովական՝ անվստահութեան քուէով պաշտօնակն կ'ըլլայ (Յօդ. 18):

Այս Կանոնագիրը հրատարակուած է թէ՛ Մասիսի (1879, թ. 2351), թէ՛ Արեւելեան Մամուլի (1879, թ. 77—78) մէջ եւ թէ՛ ասանձին հատորիկով մը (Հիմնական Կանոնագիր Կիլիկեան Ընկերութեան, Կ. Պ. 1879):

Ընկերութիւնը Վարդանեան Ընկերութեան Հաճընի մէջ բացած վարժարաններու պաշտպանութիւնը ստանձնելէ զատ 86, իր ստաջին վարժարանը կը բանայ Ձէյքուսի մէջ, ուսուցիչ կարգելով հօն Խաչատուր Տատուրեան 87:

Տիլիսի Չարուի Ս. Համամեան Կիլիկեան Ընկերութեան համար զրամահաւաք մ'ընելով՝ արդիւնքը — 133 ոսկի — Պատրիարքին միջոցաւ Ընկերութեան կը յանձնէ, որուն կ'ուղղէ Վարժապետեան Պատրիարք սրտազեղ շնորհակալութեամբ կը կոչելով զայն «ընտրելագոյն նազելի եւ ճամբարի մայր ի մարտազեղ», որ կը կրէ «զսիրտ, զօգի եւ զզգացմունս այն երանաւէտ տիկնայց մերոց Հաստանեայց՝ զորոց ներքոյս հրաշալի կերպով կը յերկրէ քաղցրախօսն եւ վշտաբեկ վ.ն Եղիշէ»: Բայց կ'արժէ յիշել նաեւ նուիրատուները.

Սարգիս Պէյ Պալեան	50
Միհրան Պէյ Տիւզեան (կաթողիկէ)	25
Յովհաննէս Եսայեան	10
Մկրտիչ Եսայեան	10
Գէորգ Սամանճեան (կաթողիկէ)	10
Միքայէլ Փորթուզայեան (կաթողիկէ)	10
Էտուարտ Պէյ Ալիքսանեան (կաթողիկէ)	5
Աստուածատուր Չունդ	5
Սերվիշէն	3
Մանուկ Արսլանեան	3
Վիշէն Ապտուլլահ (կաթողիկէ)	3
Էլիաս Չայեան 88	2

86 Հիմն. Մասիս, 1879, թ. 2475:
87 Մասիս, 1879, թ. 2360:
88 Մասիս, 1879, թ. 3396:

1879 Սեպտ. 9ի Ժողովքին մէջ նոր Գործ. Ժողով կ'ընտրուի հետեւեալ կազմով.

Գէորգ Ապտուլլահ Ատենապետ
Տիգրան Հիւնքեարպէյեան Դեր-Ատենապետ
Տիգրան Առաքելեան Ատենադպիր
Յովհաննէս Արշակունի Գանձապետ
Յարութիւն Մոստիշեան Համարակալ 89

Մկրտիչ Սանասարեան Ընկերութեան Հաճընի եւ Ձէյքուսի վարժարաններուն կը նուիրէ Փորձ Թերթի մշտատեւ բաժանորդագրութիւնը. նոյնպիսի նուիրատուութիւններ կ'ընեն ուրիշներ ալ 90:

Ընկերութիւնը 1879 Նոյ. 4ին մասնաւոր հանդէսով մը կը բանայ իր երկրորդ վարժարանը Մարաշի մէջ՝ տեսչութեամբ Մ. Էլմասեանի. հանդէսին կը նախագահէ Կիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոս 91:

Օր. Կալիսիկ Ասատուր ի նպատակ Ընկերութեան ցուցահանդէս մը կը արքէ 150 ձեռագործներով, որոնց մէջ Փոքր-Ասիոյ քարտէսն ու «Հայկ» նահապետը իրրեւ «ատենապետ, համբերութեան եւ հմտութեան հրաշակերտ» կը զնահատուին նաեւ օտարներէն 92:

Ընկերութիւնը բանալով վարժարաններ նաեւ Այնթապի եւ Սիսի մէջ՝ 1880ի սկիզբը կ'ունենայ իր պաշտպանութեան տակ Խօբը վարժարան համագումար 1000 աշակերտներով 93:

Կիլիկեան Ընկերութիւնը 1880 Յունիս 1ին միանալով Արարատեան եւ Դպրոցատէր-Արեւելեան Ընկերութիւններու հետ՝ կը կազմեն «Միացեալ Ընկերութիւն»ը, որ կը շարունակէ երեքին նպատակները գործադրել միացեալ ուժերով 94:

24. ԹՈՐԳՈՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Հիմնուած է 1879 Մայիս 1ին: Հիմնադիրն է Առաքել-Նուպար-Շահապետեանի նախկին սան Գրիգոր Թընկերեան՝ նպատակ ունենալով. «Հայաստանի մէջ բացուած վարժարաններու աշակերտներուն գիրք, բուրք եւ նման բաներ հայրապետի 95:

89 Անդ, թ. 2433:
90 Անդ, թ. 2434:
91 Անդ, թ. 2503:
92 Անդ, 1880, թ. 2611:
93 Անդ, թ. 2616: — Թէրթ. Էֆէնար, 1880, թ. 801:
94 Տէ'ս Մասիս, 1880, թ. 2624:
95 Թէրթ. Էֆէնար, 1879, թ. 560:

Գրիգոր Թընկերեան 1879 Յունիսին հրատարակել էր *Լնկերութեան անդամներուն առաջին ժողովը*, ուր պիտի վաւերացուի Լնկերութեան կանոնադրութիւնը, պիտի ընտրուի Լնդհ. ժողովի Դիւանը եւ Գործ. ժողովը⁹⁶: Լնկերութիւնս անձանօթ է Այոյաճեանի:

25. ԳՐԱՇԱՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1880)

Միութիւնս յիշուած է միայն Յակոբ Վարժապետեանէ իր «Յիշատակարան»ին մէջ:

Կազմուած է հետեւեալ գրաշարներէ. Տիգրան Տաղաւմանեան, Որդիկ Էֆէրեան, Տիգրան Մանուկեան, Մոսիկ Էֆէրեան, Գալուստ Գայրգեան, Միհրան Վայրայեան, Գառնիկ կողմայեան: Ասոնց նպատակն էր դպրոցազուրկ տղաքը հաւաքել եւ անոնց կրթութեան գործը ստանձնել: Միութիւնը իր պաշտպանութեան սակ կ'անէ նաեւ Ներսիսեանի 3—4 ուշիմ աշակերտները եւ կը հոգայ անոնց գրեական պիտոյքն ու հազուստ-կապուստը⁹⁷:

26. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1880)

Ընկերութեանս յիշատակութիւնը եղած է 1882ին, երբ անոր ի նպաստ պարահանդէս մը կը տրուի եւ կ'ըսուի թէ նպատակն է՝ «ազգային որբ եւ աղքատ մանկտիկ կրթական հաստատութեանց մէջ դաստիարակել»:

Թորգոմեանի համեմատ Ընկերութիւնս հիմնուած է 1880ին եւ տեւած մինչեւ 1884 (Երեմ. 2էլէպ., անդ, Բ., էջ 452): Նախորդին եւ յաջորդին նպատակներուն կը նմանի:

27. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1882)

Յակոբ Վարժապետեանի համեմատ⁹⁸ Սասկիւղի «Ընթերցասիրաց Ընկերութիւն»ը շարունակութիւնն է նախորդ՝ «Գրաշարաց Միութեան»: Ժամանակակից թերթերէն այդպիսի բան մը չենք իմանար: Ընկերութիւնս ծանօթ է Մասիսի, Թերքի, Էփէսարի, Արեւիկի եւ Հայրենիքի: Ընկերութիւնս հիմնուած կ'երեւայ 1882ի սկիզբը: Թերքի-մանր Էփէսարի քով կը գտնենք Ընկերութեան Մայր-Դիւանի մէկ գեղոյցը, ուր Ատենապետ

⁹⁶ Անդ, Թ. 590:
⁹⁷ Տե՛ս Յակոբ Վարժապետեան, Յիշատակարան, անդ, էջ 96—97:
⁹⁸ Անդ, էջ 98:

Սարգիս Ա. Սրկզ. Պարտիզպանեան եւ Ատենապետ Վ. Գասպարեան կը գրեն Սասկիւղէն. «Գիւղիս նորահաստատ «Ընթերցասիրաց» Ընկերութիւնը, որոյ նպատակն է Ա. Ներսիսեան վարժարանի ուշիմ եւ վկայեալ աղքատիկ արու աշակերտաց պաշտպան ըլլալ իրենց դպրոցական շրջանին մէջ եւ որ արդէն սկսած է 1882 Մարտ 15էն իւր նպատակին համաձայն 7 ուշիմ եւ աղքատիկ ուսանողներ ընտրել, նոցա բարոյական եւ նիւթական հոգատարութիւնն ստանձնել լիովին... յաջողած է բաժանորդաց թիւն 250ի ստուարացնել⁹⁹»:

Ընկերութիւնը Սասկիւղէն եւ անկէ գուրս «աղքատիկ ուսանողներ կ'որդեգրէ» 1889ին¹⁰⁰:

1893ին Հայրենիք¹ կը գրէ. «Սասկիւղի մէջ հաստատուած Ընթերցասիրաց Ընկերութիւնը տասնութիւց տարիէ ի վեր անդու կ'աշխատի... ազգին եւ տէրութեան նուիրած է օգտակար անդամներ. ասոնց մէջ են երկու բժիշկ... մէկ շրջանաւարտ Առեւտրական բարձրագոյն վարժարանէն, երեք շրջանաւարտ Ազգ. Կեդ. վարժարանէն, առանց հաշուելու երեսուցէ աւելի պաշտպանեալներ, որք այսօր գանազան արհեստներով կը զբաղին: Հիմա ունի տասը պաշտպանեալ Սասկիւղի Ներսիսեան վարժարանին մէջ եւ մէկ բարձրագոյն կարգի ուսանող Կայս. Քաղ. Բժշկական վարժարանը»:

Ընկերութիւնս վերակազմուած է 1908 Նոյ. 23ին²:

Յակոբ Վարժապետեան կու տայ քանի մը մանրամասնութիւն, անդամներու անուններ եւ Ընկերութեան կանոնադրը, որ ունէր 22 Յօդուած³:

28. ԽՆԱՄԱԿԱՆՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1884)

Անգամ մը եւս կը հիմնուի Ներսիսեան վարժարանի սանուհեաց բարոյական եւ նիւթական հոգատարութիւնը ստանձնելու համար Նոր Տիկնանց Մարմին մը: Կը յորջորջուի այս անգամ «Խնամակալուհեաց Ընկերութիւն»⁴:

⁹⁹ Թերք. Էփէսար, 1882, Թ. 1460: — Տե՛ս նաեւ Մասիս, 1882, Թ. 3224: — Արեւիկ, 1884, Թ. 50: 1888, Թ. 1756:
¹⁰⁰ Արեւիկ, 1889, Թ. 1756:
¹ Թ. 433:
² Սուրբազան, 1908, Թ. 89, 129:
³ Յիշատակարան, անդ, էջ 98—102:
⁴ Արեւիկ, 1887, Թ. 1031:

Տնօրէն Խորհուրդը կը կազմէին տասը անդամուհիներ՝ նախագահութեամբ Տիկ Աննա Էսայեանի⁵:

1887ին տակաւին Ընկերութեան նախագահը Տիկ Աննա Էսայեան է, որ 25 ոսկի հանգանակած է. Ատենապետը Իսկուհի Պ. Տէմիրեհիպաշեան, Ատենապետի թերեզա Մ. ձիգմեան է⁶:

1891ին Ընկերութիւնը «հարկ դատած է դադարեցնել ամսական նպաստը, զոր կ'ընէր յիշեալ վարժարանին (Ներսիսեանի) մասնակի վնասմամբ վարժուելոյ ամսականին⁷»:

1897ին կ'ըսուի թէ դադարած Ընկերութեան նախկին Ատենապետուհի Տիկ Աննա Էսայեանի քով 300 ոսկի կայ⁸:

29. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

Սուրբազանի⁹ «Կրթական Միութիւն» վերնագրի տակ կը գրէ. «Այս անունով խումբ մը երիտասարդներ «միութիւն» մը կազմած են իրենց նպատակ ունենալով կրթել իրենց մարմինը, միտքն ու սիրտը: Ասոր համար նախ կազմած են Մարմնամարզական խումբ մը, որ արդէն սկսած է իր մարզանքներուն...: Միութիւնը հաստատած է նաեւ Լսարան-Ընթերցարան մը, ուր ամէն տեսակ գիրքեր ու լրագիրներ պիտի գտնուին...: Լսարանին բացումը կատարուեցաւ Կերակի (Նոյ. 19, 1908) նախագահութեամբ Ս. Զաւարեանի եւ ի ներկայութեան երկսեռ հանդիսականներու»:

30. ԶԲՕՍԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1912)

Կը յիշուի 1912 Յունիսին. կը սարքէ զաշտահանդէս¹⁰: Մարզական Ընկերութիւն մ'ըլլալ կը թուի:

31. ՍԱՆՈՒՆԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1914)

Ժամանակ¹¹ 1915 Մարտին կը գրէ. «Սասկիւղի Հոգաբարձութիւնը նախ վարժարանին մէջ կազմեց «Սանուհեաց Միութիւն» մը, նպատակ ունենալով աղքատիկ երկսեռ աշակերտաց գրեական պիտոյքը հոգալ: Նոյն Միութիւնը յաջողեցաւ իր

⁵ Վարժապետեան, Յիշատակարան, անդ, էջ 112:
⁶ Արեւիկ, անդ:
⁷ Անդ, 1891, Թ. 2348:
⁸ Մասիս, 1897, Թ. 88:
⁹ 1908, Թ. 129:
¹⁰ Ժամանակ, 1912, Թ. 1140, 1146:
¹¹ Թ. 2113:

նպատակին իրագործման մէջ եւ Հոգաբարձութեան աջակցութեամբ դպրոցի շրջանէն սկսեալ 35 աղքատիկ ուսանողներու գրեման կան պէտքերը հոգալէն զատ՝ Ս. Զատիկի տօնին առթիւ ալ քսան տղայոց կ'ընէր տուաւ, ուրախացնելով զիրենք»:

Հիմնուած կ'երեւայ 1914ի սկիզբը:

32. «ԱՐԾԻՒ» ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Կազմուած է 1918ին: Նպատակն է «Նպաստել հասարակութեան մտաւոր եւ բարոյական զարգացման»: 50 անդամ ունէր 1920ին: Վարչ. Խորհուրդը կը կազմէին. Աւետիս Եազըճեան (Ատենապետ), Մ. Զուրիկեան, Յ. Գարագաշեան, Պ. Պալլազեան, Ս. Ալլահաճեան, Լ. Վանյեան, Ա. Փոլոսեան: Մայր Դիւան՝ Յ. Աճէմեան, Ս. Սարգիսեան, Մ. Պալլազեան¹²:

33. «ՇՈՒՇԱՆ» ՀԱՅՈՒՆԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1918—1919)

Վարչութիւնը կը կազմէին՝ Տիկիններ. Ա. Զուրիկեան (Ատենապետ), Է. Բիւրատ, Վ. Իգմիրլեան, Օրիորդներ. Ա. Պէրպէրեան, Վ. Ճոշկունեան, Ս. Պալլազեան, Թ. Տէօփէթեան¹³:

ԷՅՈՒՒՊ

1. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861)

Էյուպ թաղը 1861ին ունեցած է Ընկերութիւն մը, որ 1866ին «զարգացման» կ'որակուի, առանց սրեւէ բացատրութեան, միայն կ'ըսուի թէ այդ զարգացման Ընկերութեան թուով 2347 դուրուշ զրամը անցած է Էյուպի «Գարոցասիրաց Սանուց Ընկերութեան»¹⁴: Այս մասին յիշատակութիւն չունին «Սկսնակ Բանասէր», Թորգոմեան եւ Այոյաճեան:

Մեզի կը թուի թէ անանուն մնացած այս Ընկերութիւնը կոչուած է «Գարոցասէր» կամ «Գարոցասիրաց»: Իր զարգացման վերջ երբ կը հիմնուի «Առաքելեան» վարժարանի «Մակարեան Ընկերութիւն»ը՝ վերջինս իր անունը կը կցէ «Գարոցասէր» կամ «Գարոցասիրաց» ախտոյքը՝ ժամանակակից միանգամայն անոր թողուցը:

¹² Թէոդիկ, Ամէն. Տարեց. 1921, էջ 301:
¹³ Ժողովուրդի Չպիւր, 1920, Թ. 606: — Թէոդիկ, Ամէն. Տարեց. 1921, էջ 303—304:
¹⁴ Տե՛ս Փոլոսեան, 1866, Թ. 140:

2. ԳՊՐՈՑԱՍԻՐԱՅ ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1864)

Ընկերութեան հիմնումի տարիի նկատմամբ թէև 1869 Նոյեմբերին յօդուածագիր մը կը գրէ թէ «Վեցամեայ» է¹⁵, սակայն վստահ ենք թէ 1863 տարին է Ընկերութեան հիմնումի տարին:

Էյուպի «Դպրոցասիրաց Սանուց Ընկերութիւն»ը հիմնուած է 1864 Սեպտ. 21ին, ինչպէս յայտնի կը տեսնուի Ընկերութեան մէկ արտայայտութենէն¹⁶:

Ընկերութիւնս հիմնողներն են էյուպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Առաքելեան» վարժարանի Սաները: Առաքել Յ. Տատեան բարերարն եղած է էյուպի Ազգային վարժարանի, որով երախտագէտ էյուպցիք իրենց վարժարանը կը յորջորջեն «Առաքելեան» վարժարան¹⁷:

Ընկերութեան նպատակն է նպաստել քաղին վարժարանին եւ սատարել մտաւոր զարգացումին: Արդէն հիմնումի առաջին տարիէն Ընկերութիւնը բացած է Ընթերցարան մը, հասարակութեան ընթերցումի նիւթ հայթայթելով: Այդ ընթերցարանի մէջ տեղի ունեցած են նաեւ ճառախօսութիւններ՝ ազգային նիւթերու վրայ: 1869ին հայ թերթ մը կը գրէ Ընկերութեան գործի մասին. «... քաղին աղատիկ դպրոցը կը մատակարարէ, զարդարելով նաեւ իւր քանգարանը գանազան գրքերով, որ քաղին երիտասարդաց բարոյական սնունդ կը խայթայթեն: Եւ որ աւելին է, չբաւարանալով այժմեան վարժարանէն... կը յղանայ երկսեռ վարժարանի մը շինութիւնը, որ յիշուի խիստ մեծ բան մ'է իւր փոքրութեանը համեմատելով... էյուպցին վեց տարիէ ի վեր խօսարան մը ունեցած է Դպրոցասիրաց Սանուց Ընկերութեան Ընթերցարանը, ուր միշտ ազգային նիւթերու վրայ կը զբաղուի, բայց հոն յանախոյզաց քիւր տասնէն աւելի չըլլալուն, չհամարձակեցաւ խօսարան անուանել զայն¹⁸»:

1866ին Ընկերութեան նախագահն էր Յովհաննէս Սարափեան. իսկ տարեկան անդամավճարը՝ 26 զուրուշ¹⁹: 1865—1866 մէկ տարուան Մուսթն եղած է 11,286 զրշ:

35 փարա, նոյնքան ալ ԵԼԷ: Ունեցած է 105 կտոր գիրք եւ 289 զանազան թերթեր «բարեպաշտ անձերէ նուիրուած»²⁰:

1871ին Ընկերութեան Գործ. Ժողովի Ատենապետ Դանիէլ Շահպագեան եւ Ատենապետ Ռաֆայել՝ հանրութեան կ'իմացնեն թէ «մէկ քանի քաղեցիք» մատնութիւն ընելով ոստիկանութեան քով՝ փակել տուած էին Ընկերութեան Ընթերցարանը, սակայն Պատրիարքարանի միջամտութեամբ կրցած են վերստին բանալ տալ «եւ այժմ Կառավարութենէն ալ ճանչցուած ըլլալուն՝ իւր թշնամեաց խոչընդոտներն առ ոչինչ կը համարի²¹»: — Ընկերութիւնը 1873էն վերջ ալ տեսած է:

3. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865)

Թորգոմեան²² Ընկերութեան հիմնումը 1865ին կը գնէ: Կը կարծենք թէ ճիշդ է այդ թուականը: Մամուլի մէջ միայն մէկ անգամ, այն ալ շատ ուշ յիշատակուած է Ընկերութիւնս իր մէկ անդամին՝ Յ. Գ. Մավեանցի կողմէ²³:

4. ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ԵՆԱՄԱԿԱՆՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (... 1868)

Կլ յիշուի 1868 Դեկտ.ին, սակայն անկասկած աւելի հին է: Հիմնուած է էյուպի Ս. Եղիա թաղամասի Պեգեան արական վարժարանի կից աղջկանց բաժնի պաշտպանութեան համար²⁴:

Անձանօթ եղած է Թորգոմեանի եւ Ալպոյաճեանի:

5. ԱՐՏԵՄԵԱՆ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (... 1869)

Անունիս կը հանդիպինք 1869 Օգոստ.ին: Կազմուած է էյուպի «Առաքելեան» երկսեռ վարժարանի աղջկանց կրթութեան եւ յառաջադիմութեան ըստ կարի նպատակով համար²⁵»: Անձանօթ է Ալպոյաճեանի:

«Դպրոցասիրաց Սանուց Ընկերութիւն»ը եւ «Արտեմեան Տիկնանց»ը միացեալ աշխատանքով կը յաջողին Ս. Աստուածածին թաղամասի Առաքելեան վարժարանի աղջկանց

²⁰ Փուռն, 1866, թ. 140: — Հմմտ. նաեւ Մանգ. էֆֆ., 1869, թ. 1010 եւ Օրագիր, 1873, թ. 1084:
²¹ Մասիս, 1871, թ. 1088:
²² Երեմ. Չէլէպիլի, անդ, Բ., էջ 422:
²³ Տե՛ս Մասիս, Փոքր, 1869, թ. 373:
²⁴ Հմմտ. Մանգ. էֆֆ., 1868, թ. 837 եւ 842:
²⁵ Ժամանակ, 1869, թ. 145:

¹⁵ Մանգ. էֆֆ., 1869, թ. 1100:
¹⁶ Տե՛ս Արարատ, Կ. Պ. 1869, թ. 26:
¹⁷ Ծիածան, 1866, թ. 14:
¹⁸ Մանգուսի էֆֆեար, 1869, թ. 1100: — Հմմտ. Ժամանակ, 1869, թ. 145:
¹⁹ Ծիածան, 1866, թ. 1:

բաժնի համար առանձին շէնք մը ձեռք բերել իրր վարժարան: Այս նոր վարժարանի անունը կը գնեն «Արտեմեան վարժարան» եւ բացուած 1870 Ապրիլ 14ին կոկիկ հանդէսով մը կը կատարեն (տե՛ս Մանգ. էֆֆ. 1870, թ. 1216):

6. ՊԵՋՃԵԱՆ ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1871)

Հիմնուած է էյուպի Ս. Եղիա թաղամասի Պեգեան վարժարանի սաներէն: 1871 Դեկտ. 20ին կը գրեն Ընկերութեան երեք անդամները. «էյուպ Ս. Եղիա թաղիս Յ. Պեգեան վարժարանի աշակերտքս վեց ամիսներէ հետէ ընդ պաշտպանութեամբ թաղեցի Մեծ. Համազասպ աղա Ռաֆայէլեանի Սանուց Ընկերութիւն մը կազմեր ենք մեր մէջ, Ընկերութեան անդամակցող սան մը, մէն մի բաժնի համար շարաթական մի միայն 10 փարա կը վճարէ...»:

Ի դիմաց Պէջճեան Ս. Ընկերութեան

Տիրան Տ. Մանուկեան
Արիստակէս Հ. Յակոբեան
Պետրոս Մուրատեան²⁶:

Ընկերութեան գրքեր ու թերթեր նուիրած են զանազան անձեր²⁷:

Անձանօթ է Ալպոյաճեանի:

ՊԱՂԱԹ

1. ԳՊՐԱՅ ԴԱՍ (1730)

Պալաքի հնագոյն ընկերական կազմակերպութիւնը թաղին Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Դպրաց Դասն է, որուն ծագումը կը բարձրանայ մինչեւ 1730 տարին¹:

Ա. Յ. Այվազեան² կը գրէր 1899ին. «Պալաքու եկեղեցին գրեթէ 120 տարուան կազմակերպեալ Դպրաց-Դասու Ընկերութիւն մը ունի, որուն պաշտպան եւ քաջալեր հանդիսացած է, Վարժապետեան հոգեւոյն Ներսէս Ս. Պատրիարքի պապը՝ Ձէննէ վերածայնեալ Տիրացու Պօղոս Աւագ-Սարկաւազը, որ ժամանակակից նշանաւոր շարականագէտներէն ու ձայնագրագէտներէն մէկն է»:

²⁶ Մանգ. էֆֆ., 1871, թ. 1803:

²⁷ Անդ:

¹ Պետրոս Կարապետեան, Հնագորեան Յիշատակարան Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ, Կ. Պ. 1935, էջ 302: — Ա. Ալպոյաճեան, Գաղ. Տարեգր., Ա., էջ 52:

² Ծիածան, Կ. Պ. 1899, թ. 55:

Հետեւորար ըստ Այվազեանի Պալաքի Դպրաց Դասը 1778—1779էն է: Ինչպէս սակայն վերը ըսինք, մատնանշելով երկու աղբիւրներ, Պալաքի Դպրաց-Դասի հնութիւնը աւելի բարձր է, քան որ կը համարէր Այվազեան:

Յ. Բիւրտեան եւս վերջերս Պալաքի Դպրաց-Դասի 1778ի Կանոնագիրը հրատարակած ատեն կը գրէր. «Պալաքու Հայոց, կրնանք առ այժմ տալ առաջնութիւնը եկեղեցւոյ դպրաց կազմակերպութիւն եւ անոնց համար պատրաստուած կանոններուն³»:

Ինչպէս կը տեսնուի՝ յարգելի Յօդուածագիրին անձանօթ են Սամաթիոյ Դպրաց-Դասը՝ 1703էն, Սկիւտարի Դպրաց-Դասը՝ 1710էն, Մայր-Եկեղեցւոյ (Գուճգափուի) Դպրաց-Դասը՝ 1719էն⁴:

Երախտագէտ ենք սակայն Բիւրտեանի, որ հրատարակ կը հանէ Պալաքի Դպրաց-Դասի Կանոններու մասին 1778ին գրուած մէկ Ձեռագիրը, որ մաս կը կազմէ իր Ձեռագրաց Հաւաքածոյին:

Այդ Ձեռագրէն կ'իմանանք թէ Պալաքի Ս. Հրեշտակապետայ եկեղեցւոյ Դպրաց Դասը 1778ին «Կանոնական Յիշատակարան» մ'ունի, այսինքն՝ Կանոնագիր մը, որ «կրկնաբար՝ նորոգ հաստատեցեալ եղեւ: Յորում պարունակին կանոնք վերահաստատեցեալ⁵»: Ուրեմն՝ 1778ին առաջին անգամ յօրինուած չեն այդ Կանոնները, այլ նախագէտ գոյութիւն ունեցած Կանոններու վերակազմութիւն մ'են («վերահաստատեցեալ»):

Պալաքի Դպրաց Դասի Կանոնները 10 կէտերէ կը բաղկանան⁶, ունենալով նաեւ 10 «Պատուէրք»⁷:

Թէ՛ բովանդակութեան եւ թէ՛ լեզուի տեսակետով շահեկան ըլլալուն՝ իբրեւ նմոյշ յառաջ կը բերենք Ա. Կանոնը. «Յորժամ տղայ յառաջ կը բերենք Ա. Կանոնը. «Յորժամ տղայ մի ի մայն մտանել եւ տէփտէր դպրացն գրելի կամենայ. յ(ա)ն(ա)չագոյն քանի մի ամիս փորձիցի ի փոխանորդաց եւ ի մայնապ(ե)տ(ա)ց ի վարուց եւ ի բարուց կողմանէ, եւս թէ է գրավարժ ըստ բաւականին. յայնժամ ի մայն մտանիցէ ի գումարս դպր(ա)ց⁸»:

³ Շողակաք, Կ. Պ. 1952, թ. 5, էջ 116:
⁴ Հմմտ. Ա. Ալպոյաճեան, Գաղ. Տարեգր., Ա., էջ 51—52: — Պետրոս Կարապետեան, անդ, էջ 294—302, եւ այլն:

⁵ Շողակաք, անդ, էջ 112:

⁶ Տե՛ս Շողակաք, անդ, էջ 114—115:

⁷ Անդ, էջ 115—116:

⁸ Անդ, էջ 114:

1870ին Մանգ. Էփ. (Թ. 1263) կը յիշէ Պալաթի «Գարաց Ընկերութիւնը»:

1778ին Պալաթի Դարաց Դասին Դարաց պետն էր «տիրացու Ռափայէլ», իսկ իր փոխանորդները՝ «ճահախ Դերձակ տիրացու Ռափայէլ» եւ «Մանկավարժ տիրացու Սարգիս»⁹:

Ինչպէս Ալլոյոյանէան¹⁰ կը հաւատէ՝ մինչեւ վերջերս կը պահէր Պալաթի Դարաց Դասը իր գոյութիւնը՝ «վառ պահելով նորահասներուն մէջ եկեղեցիին ծառայելու եռանդը եւ փափաքը»:

2. ԱՐԱՐԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1844)

Դոկտ. Վ. Թորգոմեան¹¹ եւ Ա. Ալլոյոյանէան¹² Պալաթի Արամեան Ընկերութեան հիմնումը 1845ին կը դնեն: Մինչ ժամանակակից հայ թերթը՝ Արշալոյս Արարատեան¹³ 1844 Սեպտեմբեր 2 թուականով կը ծանուցանէ արդէն անոր հիմնումը ըլլալը: Յիշեալ թերթը հոգ ըսելէ յետոյ թէ Գուգափուի մէջ «Լուսաւորչեան Ընկերութիւն»ը հիմնուած է՝ կը գրէ. «Կը լսեմք թէ Պալատու դպրատան յառաջադիմութեանը համար պատանկ մէկ Ընկերութիւն մը հաստատուեր է Սրբազան Պատրիարքին ազգասիրական խնամքովը, որուն վրայօք հարկաւոր տեղեկութիւններ դեռ չստացանք որ ծանուցանենք բարեսէր հասարակութեանը:

Զմիւռնոյ հայ թերթը տեղեկութիւն ստանալէ վերջ (1845ին) Պոլսոյ 9ը Ընկերութիւններու կարգին — Գուգափուի «Լուսաւորչեան»ի քովը — կը յիշէ նաեւ Պալաթի «Արամեան Ընկերութիւն»ը (Արշ. Արարատեան, 1845, Թ. 235):

Հետեւաբար Պալաթի Արամեան Ընկերութիւնը ոչ թէ 1845ին՝ այլ 1844ի Սեպտեմբերէն առջ հիմնուած է:

Արամեան Ընկերութեան նպատակն է Պալաթի «Նորէնեան» վարժարանի նպաստել:

Ալլոյոյանէանի համեմատ¹⁴ Ընկերութիւնը 1847ին կը կազմաւորուի եւ «Նորչեան» անունով կը վերակազմուի: Այս մասին հին վկայութեան մը չենք հանդիպած: Ընդհակառակն Ընկերութիւնը ողջ է, իր

⁹ Անդ, էջ 113:
¹⁰ Գաղ. Տարեգր., Ա., էջ 52:
¹¹ Երեմիա Զէլէպիի Մասմուրայ Պատմ., Ա., Վիեննա 1913, էջ 323:
¹² Անդ, էջ 54:
¹³ Զմիւռնիա, 1844, Թ. 206:
¹⁴ Անդ:

ակգրեական անունով, տակաւին 1871ին (տե՛ս Օրագիր, 1871, Թ. 459):

3. ԽՈՐԷՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1846—1847)

Պալաթի մէջ «Նորչեան» անունով վարժարան մը արդէն 1816ին հիմնուած էր¹⁵: Այդ վարժարանին անունով վարժարանի պաշտպան Խորէնեան Ընկերութիւն մը եւս կը հիմնուի անցեալ դարու 40ական թուականներուն, սակայն ժամանակակից հայ թերթերէն ոչ մէկուն քով հանդիպած ենք Ընկերութեան հիմնումի պարագաներուն ու թուականի մասին: Այդ Ընկերութեան տառջին յիշատակութիւնը 1857 Յունուար 10ին Մասիս կ'ընէ, ըսելով թէ «ասկէց տասն տարիի չափ առաջ» կազմուած է: Հետեւաբար կարելի չէ վճռականօրէն ըսել թէ 1846ին թէ 1847ին հիմնուած է ան: Ալլոյոյանէանի յօդուածին մէջ¹⁶ 1846 թուականը նշանակուած է իբրեւ հիմնումի թուական, իսկ Սկսնակ Բանասէր¹⁷, Հրանդ Ասատուր¹⁸ եւ Թորգոմեան¹⁹ 1847 թուականը կ'ընդունին:

1856ին Նորչեան Ընկերութիւնը կը վերակազմուի Պալաթի հայ երեւելիներէն Պետրոս Խորասանեանի նախաձեռնութեամբ ու նպաստներով: Այս ամէնուն մասին կարելոր է Մասիսի վերոյիշեալ տեղիքը, զոր կուտանք ամբողջութեամբ:

Հայ թերթը կը գրէ. «Մայրաքաղաքիս Պալատու թաղին հայ ժողովուրդը՝ ասկէց տասն տարիի չափ առաջ Ընկերութիւն մը կազմելով, յանուն սրբոյն Մովսէսի Խորենացոյ՝ իրենց դպրատունը բարեկարգելու ձեռք գարկեր էին. բայց մէկ կողմանէ նոյն թաղին մէջ ձեռնհաս անձանց նուազութիւնը եւ միւս կողմանէ ժողովրդեան մեծագոյն մասին մէջ ուսման սէրը բաւական տարածված չըլլալը՝ դպրոցը հիմնաւոր եւ տեւական բարեկարգութեան վիճակի մը մէջ դնելու համար եղած ջանքերուն յաջողութեանը դժուարութիւն կու տային: Այս ապարդիւն եւ անհաստատ վիճակին վերջ մը տարու համար, ասկէց ութ ամիս առաջ, նոյն թաղին երեւելիները՝ Խորասանեան մեծապատիւ Պետրոս ամիրային քաջայերական յորինուածական դաստիարական առատաձեռն նպաստութիւն վերոյիշեալ

¹⁵ Ընդարձակ Օրացոյց, Կ. Պ. 1901, էջ 184:
¹⁶ Գաղ. Տարեգր., Ա., էջ 57:
¹⁷ Արեւիկ, 1898, Թ. 3854:
¹⁸ Ընդ. Օրաց., անդ, էջ 232:
¹⁹ Երեմ. Զէլէպ., անդ, էջ 323:

Խորենեան Ընկերութիւնը նորոգեցին եւ դպրոցը ի հիմանց բարեկարգեցին²⁰»:

Դպրոցի շէնքին հիմնական նորոգութեան համար Ընկերութիւնը վիճակահանութիւն մը կ'ընէ²¹:

1858ին Ընկերութեան նախագահն է Պետրոս Խորասանեան Ամիրա²²:

Ըստ Ալլոյոյանէանի²³ Ընկերութիւնը 1866ին կը յաջողի դպրոցի նոր շէնք մը կառուցանել: 1883ին երրորդ անգամ կը վերակազմուի Ընկերութիւնը²⁴: 1893 Ապրիլ 11ին չորրորդ անգամ կը վերակազմուի՝ քառասուրդ նպատակով. 1. Դարման հիւանդաց, 2. Նպաստ աղքատներու, 3. Խորենեան վարժարանի աղքատ ուսանողներու գրեական պիտոյքի եւ 4. Մատենադարան²⁵:

Զատ է Պալաթի «Նորչեան Ապագային» Ընկերութիւնը, որուն վրայ յետոյ:

(Շարունակելի): 2. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

Բ. ԹԱՇՃԵԱՆ (ԳԱՐԵՆՅ), Արշակունի Հայաստանի Խաղարամեայ փառքը: Գահիրէ 1950, 80, էջ 560:

Հայոց պատմութեան նախաքրիտոնէական 522—539 տարիներուն նուիրուած է աշխատութիւնս: Ամէնէն կնճոտ չըջանը Հայոց պատմութեան: Յոյն եւ լատին գրականութեան մէջ պահուած սակաւթիւ եւ աղօտ տեղիքները, արձանագրական եւ գրամագրական աղքատ տուեալներն եւ ազգային անվստահելի աւանդութիւնները ազբուր պիտի ծառայեն պատմագէտին լուսաւորելու նորագոյթ ժողովուրդի մը նիստն ու կացը եւ անոր աղբսը անդրենածին ցեղերու եւ դրացի աշխարհակալներու եւ անոնց ենթակայ ժողովուրդներու հետ:

Աշխատութեանս հեղինակը պատմասէր է. ան ուսումնաստենչ ոգով կարգացած է այս շրջանին հայոց հին եւ նոր եւ նորագոյն ուսումնասիրութիւններ, ծաղկաքաղած է անոնցմէ լայն էջեր, տարիներ շարունակ: Ան ժամանակը հասունցած զգացած է այս ստաղծները յորինուածական դասաւորու-

²⁰ Մասիս, 1857, Թ. 250:
²¹ Անդ, Թ. 308:
²² Անդ, Թ. 328:
²³ Գաղ. Տարեգր., Ա., էջ 57:
²⁴ Հմմտ. Թորգոմեան, անդ, էջ 324:
²⁵ Ալլոյոյանէան, անդ:

թեան ենթարկելու եւ կազմելու Հայոց պատմութիւն մը յիշել չըջանի, գինուած, «խիզախ» դատողութեամբ: Առ այս քաջալերած են զինքը ծանօթ պատմասէրներ: Իր նպատակն եղած է տալ հայրենակիցներուն հայրենիքի պատմութիւնը:

Կը գովեմ նպատակը, կը դրուտեմ եռանդը, բայց կը կասկածիմ գործին յաջողութեան վրայ:

Պատմասէրը եթէ չէ ուզած բանասէր հանդիսանալ, բայց պէտք էր յանձն առնել քննասէր ըլլալ եւ եզրակացութիւններու մէջ համեատ քան «խիզախ»: Եթէ հոյը ստեղին տակ հաստատուն չէ, խիզախ ուսումը անպատճառ պիտի ձախողի:

Զեմ ուզեր այստեղ օր եւ է կէտ մանր քննութեան առնել, քանի որ քննական աշխատութիւն մը չէ ներկայացուած մեզի: Բայց չեմ լսեր յիշեցնելու, որ անժամանակ է իբրեւ պատմական աղբիւր ձեռք առնել «Մար Արասի պատմութիւնը» լուսարանելու համար պատմական շրջան մը:

Եթէ քննասէր չենք, գահանաք տալ մեր ընթերցողներուն գոնէ նորագոյն ուսումնասիրութիւններու եզրակացութիւնները մեկին սիրութիւններու եզրակացութիւնները մեկին եւ մատչելի: Յանկալի էր, որ հին պատմութիւնը իր անձանտոններով եւ տեղանուններով ներկայացուէր ին տառադարձութեամբ:

Հեղինակը ազնիւ դանուած է իր այս աշխատութիւնը հրապարակ հանել իբրեւ «Զօն Սերաստացի Միտի» արբաժօր իր մասնուն թ. դարադարձին առթիւ»: Որուն համար կը յայտնեմ մեր սրտաղին շնորհակալութիւնը:

Հ. Ն. Ա.

ՍԻՍԱԿ Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ. Հայերը Լիբանանի մէջ: Պէյրուս 1951, մեծ 80, էջ 39 + 500:

Լիբանանի հայ դպրութիւնը եւ աւանդու պատմական յիշատակարաններ եւ աւանդութիւններ ցոյց կու տան, թէ 1700—1900 շրջանին եղած են հոն Հայեր, որոնք կազմած են Միաբանութիւններ (Անտոնեանց եւ Զմմա-նու վանքին), եւ Հայ բողոքական համայնք (1824էն սկսեալ), կառուցուած են Հայ կաթողիկէ եւ Հայ լուսաւորչական եկեղեցիներ եւ վարժարաններ:

Վարժապետեան զովելի եռանդով եւ անխոնջ պրպտումներով երեւան բերած է ականաւոր անձեր, տուած է անոնց կենսա-